

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՅՈՒ

ՀԱՆԴԻԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻՆ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության լավագույն տրադիցիաների իսկական ժառանգորդի՝ սոցիալիստական հայ ազգի կուլտուրայի փառապանծ տոնի վերածվեց մեծ լուսավորիչ, ույ զբերի ստեղծող և հայ դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը։ Այդ իրադարձությանն էր նվիրված հորեյանական հանդիսավոր նիստը, որը տեղի ունեցավ մայիսի 27-ին Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շխանակների օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում։ Այստեղ էին հավաքվել ռեսպուբլիկայի աշխատավորության ներկայացուցիչները, Սովետական մեծ Միության Եղրայրական ժողովուրդների պատվիրակները, արտասահմանյան մի շարք եկրներից ժամանած հայ հյուրերը։

Քեմի խորհում մեծ գիտնականի պուրտեն է, որի ձախ կողմում Երևում են «1600» և մեսրոպյան «ՅԿԻ—ՌՋԿԻ» ոսկեղոծ րվանդանները։

Ցերեկվա ուղիղ ժամը 12-ն է։

Նախագահությունում տեղեր են գրավում րեկ. րեկ. Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ, Ե. ԱՍՅԱՏՐՅԱՆԸ, ՀՈՎՀ. ՐԱՂԳԱՍԱՐՅԱՆԸ, ՅԱ. ԶԱՌՈՐՅԱՆԸ, Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆԸ, Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆԸ, Բ. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ, Գ. ՏԵՐ-ՂԱ-ԶԱՐՅԱՆՅԸ, Ա. ՔՈՉԻՆՅԱՆԸ, Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆԸ, Վ. ԴԱՐՔԻՆՅԱՆԸ, հորեյանական կառավարական հանձնաժողովի անդամներ, գիտության ու կուլտուրայի ակադեմիկոս գործիչներ, արտագրության առաջավորներ, Եղրայրական ռեսպուբլիկաների ներկայացուցիչներ, սփյուռքահայ հյուրեր։

Հորեյանական կառավարական հանձնաժողովի նախագահ, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ Ա. ՔՈՉԻՆՅԱՆԸ, րացելով հանդիսավոր նիստը, ասաց.

Հարգելի րեկերեն՝, րանկագին հյուրեր՝ և րարեկամեն՝:

Այս օրերին Հայաստանի աշխատավորները Սովետական մեծ Միության րոլոր ժողովուրդների հետ, խորին Երախտագիտությամբ ու մեծ հանդիսավորությամբ տոնում են հայ րբերի ստեղծող և հայ դպրության հիմնա-

դիր, մեծ գիտնական ու հայրենասեր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը։

Մեր ժողովուրդը դարերի րերացում շատ փորձություններ է կրել, րչնամու արյունոտ րաքղանը շատ անգամ ծանրացել է նրա վրա, րայց նա Երբեք չի րեկնվել։ Անցնելով պատմության ծանր, հերոսական րառուդիներով, կյանքի մեծ փորձով և հոգևոր հարուստ զանձներով նա կանգնեց մեր դարի շեմին։

Հոկտեմբերյան ՄԵԾ ռեռյուցիայի շնորհիվ հայ ժողովուրդը մտավ սոցիալիստական ազգերի հզոր րանակի մեջ իրեն նրա իրավահավասար մի ջոկատը։

Սովետական իշխանությունն էր, որ մեսրոպատառ գրականությունը դարձրեց ողջ ժողովրդի սեփականություն և մայրենի այրրենարանը րացեց ամեն մի հայ մանուկի առաջ։ Օտարների կողմից հալածված հայոց լեզուն լենինյան ագգային րադականության շնորհիվ դարձավ պետական լեզու և այժմ սպրում է իր ծաղկման իսկական ոսկեդարը։

Սովետական իշխանության տարիներին հայրեն լեզվով մեր ռեսպուբլիկայում գրվել և լույս է տեսել շատ ավելի գիրք, րան անցած 1500 տարիների րերացում։ Հայ աշխատավոր մայրենի լեզվով հին, նոր և նորագույն հեղինակների Երկերի հետ միասին, կարդում է համաշխարհային գրականության և գիտության դասական գործերը, հաղորդակից դառնում մարդկության առաջավոր մտքին ու մշակույթին։

Տոնելով հայ գրերի ու գրականության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, հայ ժողովուրդն այսօր իր Երախտագիտության սրտարուխ խոսքն ուղղում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի լենինյան Կենտրոնական Կոմիտեին՝ րացադիկ այն պայմանների համար, որ ստեղծվել են րոլոր ժողովուրդների ազգային կուլտուրաների աննախընթաց ծաղկման և րարգավանման համար։

Րեկ. Քոչինյանը ներկաների րուռն ծափահարությունների ներքո ջերմորեն ողջունում է

բանկային հյուրերին՝ միութենական ռեսպուբլիկաներից ժամանած պատվիրակներին, ինչպես նաև սփյուռքահայության ներկայացուցիչներին:

Ընկ. Քոչինյանը զեկուցման համար ծայր տալիս է Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. ՀԱՄԻՐՉՈՒՄՅԱՆԻ:

— Այսօր հայ ժողովուրդը, — ասում է նա, — տոնում է իր մեծ զավակի՝ հայերեն ճշգրտության ստեղծող, հայոց մատենագրության, ուսման ու դպրոցի հիմնադիր, մեծ գիտնական ու լուսավորիչ անմահ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

Մեսրոպ Մաշտոցի ծննդյան հորելանը հայ ժողովրդի հետ միասին ճշում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները: Նվ դա հասկանալի է: Մեր երկրում մի ժողովրդի սունը տոն է նաև բոլոր եղբայրական ժողովուրդների համար: Պատահական չէ, որ այսօր Մոսկվայի՝ մեր Հայրենիքի պանծալի մայրաքաղաքի հասարակայնությունը լայնորեն ճշում է Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը:

Մեսրոպ Մաշտոցի հորելանի ճշումը դա Կոմունիստական պարտիայի և կառավարության արժանի զեմատումն է անցյալի մշակութային ժառանգության և չեմո հոգատարությունը՝ սովետական բոլոր ժողովուրդների ձեռով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի նկատմամբ:

Մաշտոցի կատարած գործը այն մեծագույն ծառայությունն է, որ կարող էր մատուցել հեռավոր այն ժամանակներում մշակույթի որևէ գործիչ իր հայրենիքին ու հարազատ ժողովրդին: Մեր ժողովուրդն անհուն երախտագիտությամբ, սիրով ու հարգանքով է լցված Մաշտոցի նկատմամբ: Անսպառ ու հարատև մի զգացմունք է դա, որը եղել է, կա ու միշտ կլինի, քանի կա ու կլինի ինքը՝ հայ ժողովուրդը: Զեկուցողը խոսում է այն պայմանների մասին, որոնք հրամայաբար թելադրում էին սեփական գրերի ստեղծման անհրաժեշտությունը:

Ամրողը 5-րդ դարը Հայաստանում անցնում էր օտար տիրապետողների դեմ մղված ժողովրդական ապստամբությունների և ռազմական դիմադրության պայմաններում:

Նույն այդ դարում և նույն այդ ապստամբություններին զուգահեռ, Հայաստանում բուռն թափով ծավալվեց ու զարգացավ մեսրոպյան նօթաստեղծ գրերով գրականությունն ու գիտությունը: Գիրը դառնում էր ժողովրդի կազմակերպման, ուսման ու դաստիարակության ճգնաժամ:

Ընկ. Վ. Համբարձումյանը մանրամասն խոսում է ժամանակի բարձրագույն գործերի

մասին, քե ինչպիսի բարերար ազդեցություն է ունեցել հայ գրերի ստեղծումը հայ պատմագրության, գիտության, գեղարվեստական գրականության ու շափածո խոսքի, հոգևոր ու աշխարհիկ երկերի, ժողովրդական երաժշտության, առողջանական արվեստի, արվեստագիտության, բերականության, հոետորական արվեստի և արվեստի ու կուլտուրայի այլ նյութերի հետագա զարգացման վրա:

Մեսրոպ Մաշտոցի մեծ գյուտից հետո կառուցարարություն քաջ հանդիսացավ հայկական տպագրության հիմնումը: Առաջին հայերեն գիրքը «Պարզատումար» խորագրով լույս է տեսել 1512 թ. Վենետիկում, և մենք այսօր Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի հետ միասին ճշում ենք նաև հայ տպագրության 450-ամյակը:

Հաջորդ քաջը հանդիսացավ մեսրոպյան տառերով հայ տպագիր քարտեզագրության ստեղծումը վանանդեցիների կողմից, որոնք Ամստերդամում 1699 թվականին տպագրեցին աշխարհի կիսագնդերի քարտեզը: Հանդիսանալով առևտրի համար կառուցարարություն աշխարհագրական ինֆորմացիայի կողմից մի նոր ձև, մեր քարտեզագրությունը իր հիմնադրումից մինչև այժմ օգտագործում է մեսրոպյան տառերը:

Սովետական կարգերի հաստատումով Հայաստանում տեղի ունեցավ հայ գրերի ու գրականության այնպիսի վերելք, որի մասին անցյալում կարող էին միայն երազել մեր առաջավոր մարդիկ: Խսպառ վերացվեց անգրագիտությունը: Մեսրոպյան գրին ու գրքին ծանոթացան Սովետական Հայաստանի բոլոր քաղաքացիները: Երկիրը ծածկվեց դպրոցների խիտ ցանցով: Գրադարանների թվով Հայաստանը առաջ անցավ շատ և շատ եվրոպական երկրներից: Այժմ մեր ռեսպուբլիկայում գործում են 1,200-ից ավելի դպրոցներ, որոնցից շուրջ 400-ը լրիվ միջնակարգ կրթություն են տալիս իրենց սաներին: Կազմակերպվեցին համալսարաններ և բազմաթիվ բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ:

Մեզանում տարեկան լույս է տեսնում հազարից ավելի անուն գիրք՝ 7 միլիոնից ավելի ապաքանակով: Թերթերը տարածվում են մոտ 400 հազար օրինակով: Հիշենք նաև, որ մեր մյուս եղբայրական ռեսպուբլիկաներում նույնպես գոյություն ունեն հայկական դպրոցներ, տպագրվում են մեսրոպատառ գրքեր, ամսագրեր ու լրագրեր:

Հայերենը դարձել է պետական լեզու, ներառվել է կազմվում Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի պետական փաստաթղթերն ու օրենքները: Մեսրոպյան տառերով

լ կատարվում պետական հիմնարկների պաշտոնական գրադրությունը: Մեսրոպյան տառերով են գրված Հոկտեմբերյան ռեզյուցիայի բոցայունը Երզնի Եղիշե Չարենցի և սովետահայ մյուս լավագույն հեղինակների երկերը:

Հայոց լեզուն և մեսրոպյան տառերը այսօր կապում են մեզ հետ սփյուռքի հայությունը, որի դժվար պայմաններում մահառում է ներծնլման վտանգի դեմ, սպասելով այն բաղձալի օրվան, երբ կհավաքվի իր հայրենի կտորի տակ:

Մեր պատմության սովետական դարաշրջանը դարձավ հայ մշակույթի ընդհանուր վերածնության և վերելքի դարաշրջան:

Երևանցի լեզուն մեսրոպյան տառերը ծառայել են հայ ժողովրդի միասնության, նրա գոյության պահպանման, նրա մշակույթի ինքնուրույն զարգացման գործին, ապա այսօր, երբ մեր ժողովուրդը ապահով ու հանգիստ ապրում է սովետական ազգերի եղբայրական ընտանիքում, նրանք ծառայում են կոմունիզմի գաղափարների իրագործմանը, ժողովուրդների հետագա մերձեցման և ամրոգչ աշխարհի խաղաղության ու առաջադիմության մեծ գործին:

Բնկ. Վ. Համբարձումյանը իր գեկուցումը, որը հանախ ընդհատվում էր ծափահարություններով, ավարտում է հետևյալ խոսքերով.

Հավերժ փառք Մեսրոպ Մաշտոցին:

Թող նրա հանճարեղ գյուտը սյսունետև էլ շարունակի ծառայել սովետական ժողովրդի վեհ նպատակներին:

Ողջույնի համար ծայր տրվում է Ուկրաինայի Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Կ. ՅեկոնիՅԿՈՅԻՆ:

— Մեզ՝ Ուկրաինայի Գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչներին, — ասում է նա, — բարձր պատիվ է վիճակվել մասնակցել հայ ժողովրդի կուլտուրայի այս հիանալի տոնին՝ հայ գրերի ու հայ դպրության հիմնադիր, մեծ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հորեկանական նիստին:

Գրերի միջով, իր հերոսական պայքարով, իր պատմական կյանքի ամենադժվարին ճամփաներով հայ ժողովուրդը պահել ու մեր պայծառ երկային է հասցրել Մեսրոպ Մաշտոցի պայծառ անունը, անունն այն մարդու, որի հանճարեղ գյուտի շնորհիվ զարգացել է հայկական ինքնատիպ կուլտուրան, հարուստ գրականությունը: Մեսրոպ Մաշտոցի անունը քանկ է ոչ միայն հայ ժողովրդի համար: Նրան զնախառում և հարգում են Սովետական Միության բոլոր եղբայրական ժողովուրդները, ամրոգչ առաջադեմ մարդկությունը:

Քելոդուսիայի գիտական և գրական հասարա-

կայնության անունից Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը շնորհակալությամբ Քելոդուսիայի Գիտությունների ակադեմիայի Արվեստի և Էքզոգրաֆիայի ինստիտուտի դիրեկտոր Պ. Գլեբկով:

Հայ ժողովրդի այսօրվա նվաճումների մեջ բաժին ունի նաև հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը, որը գիր է տվել հստակապ ժողովրդին, պարզել նրան հոգևոր արժեքներ ստեղծելու և այն սերունդներին ավանդելու նգոր զենք:

Այսօր Հայաստանի բարեբեր հողը աշխատասեր ու տաղանդավոր հայ ժողովրդի ձեռքով դարձել է մեր սոցիալիստական մեծ Հայրենիքի չնաղ անկյուններից մեկը: Քելոդուսական ժողովուրդը հիացած է իր եղբոր աշխատանքային վերաբերման հաջողություններով:

Շնորհակալություն բեզ, Երկիր՝ Հայաստան, բո տաղանդների, բո աշխատանքի, բո բարեկամության, բո պայծառ երկային և շնչող ապագայի համար:

Հանդես է գալիս Ուկրեկստանի Գիտությունների ակադեմիայի Լեզվի և գրականության ինստիտուտի սեկտորի վարիչ Գ. ԱՅԿՈՒՅԻՆԱՆՆԱՆՈՎԻ:

— Սովետական երկրում, — ասում է նա, — Լեինյան ազգային իմաստուն ֆաղափականության շնորհիվ, խոր հարգանքով են վերաբերվում բոլոր ժողովուրդների կուլտուրական ժառանգությանը: Այդ ֆաղափականության վառ օրինակն է այսօրվա տոնը:

Մենք՝ ուկրեկներս, հիանում ու հպարտանում ենք հայ ժողովրդով, որի լավագույն զավակներից մեկը՝ Մեսրոպ Մաշտոցը, դեռևս մարդկության կուլտուրայի արշալույսին ստեղծել է հայոց ինքնատիպ այբուբենը: Մենք ուրախանում ու հպարտանում ենք հայ ժողովրդով, որն իր անձնուրաց աշխատանքով արժանի բաժին է մուծում մեր երկրում կոմունիզմի կառուցման գործում:

Ծայր տրվում է Վրաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. ՇԱՆԻՉԻՆ:

— Հայ կուլտուրայի զարգացման համար, — ասում է նա, — անզնախտելի են Մեսրոպ Մաշտոցի ծառայությունները: Նա ստեղծել է հայկական գիրը, որն իր բարձր արժանիքներով համարվում է լավագույն այբուբեններից մեկը աշխարհում:

Սակայն միայն Սովետական իշխանության հաղթանակի շնորհիվ իրականություն դարձան հայ ժողովրդի լավագույն զավակների երազանքները: Միայն սոցիալիստական կարգերը Հայաստանին դուրս բերեցին տնտեսական ու հոգևոր զարգացման, ծաղկման իսկական ուղին, նրա սուղ բացեցին առաջադիմության անսահման հորիզոններ:

Ամբիոնին է մոտենում Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայի բոլորակից-անդամ Մ. ՇԻՐՈՒՆԻՎԱԼԻ:

— Բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում, — նշեց նա, — հայկական դիրք խոշոր դեր է խաղացել հայ ժողովրդի դիտության, դրականության ու արվեստի զարգացման գործում: Հայկական գրի դերը մեծ է նաև համայն մարդկության համար: Այդ գրով պահպանվել են համաշխարհային կուլտուրայի շատ արժեքներ:

Ադրբեջանական ժողովուրդը նույնպես լայնորեն նշում է եղբայրական հայ ժողովրդի կուլտուրայի տոներ:

Մովսես Խոբենացու, Փավստոս Բուզանդի, Նիզիյի, Կորյունի, Սերևուսի և մյուս հայ պատմիչների պատմական ստեղծագործությունները, որոնք գրվել են Մեսրոպ Մաշտոցի գրերով, օգնում են բացահայտելու ոչ միայն հայ, այլև մյուս ժողովուրդների, մասնավորապես ադրբեջանցիների ու վրացիների, պատմության շատ հարցեր: Հին հայկական աղբյուրները հնարավորություն են տալիս խոր ուսումնասիրել անդրկովկասյան ժողովուրդների պատմությունը:

Լիտվան, — իր ելույթում ասաց Լիտվայի Գիտությունների ակադեմիայի բոլորակից-անդամ, գրող Ա. Վենցկովսկիս, — որի ավեր ողողում են Բալթիականի ջրերը, հազարավոր կիլոմետրերով նեոու է արևադր Հայաստանից: Բայց մեր ժողովուրդներին անհատկապես թվում է իրար է կապում լեռնային բարեկամությունը:

Լիտվական ժողովուրդը սիրում է հեռավոր Հայաստանը, որի հոգի վրա աճում են ոչ միայն խաղող ու ցորեն, այլև ուժեղ, փառքի ու տաղանդավոր մարդիկ, որոնց ձեռքերով կառուցվել են ուսպուրիկայի հիսսաֆանչ մայրաքաղաք Երևանը, գործարաններ ու էլեկտրակայաններ, գիտական հաստատություններ, արվեստի սփռչիլի հուշարձաններ:

Մ. Մաշտոցին նվիրված այս պայծառ տոնին ձեզ հետ են մեր մեծ երկրի բոլոր ժողովուրդները, որոնք պայքարում են օր առաջ կենսագործելու Սովետական Միության Կոմունիստական պարտիայի հոյակապ կանխագծումները:

Ելույթ է ունենում Մոլդավիայի Գիտությունների ակադեմիայի բոլորակից-անդամ, նույն ակադեմիայի Պատմության ինստիտուտի ղեկավար Ե. ԻՈՒՍՍՆՎԷԼ:

— Այս հիանալի տոնին Սովետական Միության ժողովուրդների ներկայացուցիչների մասնակցությունը, — ասում է նա, — համոզիչ ապացույց է մի միասնական ընտանիքում միավորված ազգերի բարեկամության ու եղբայրության:

Մոլդավական ժողովրդի հակատագիրը շատ կողմերով նման է հայ ժողովրդի նակատագրին: Մոլդավական և հայ ժողովուրդների բա-

րեկամությունը զալիս է դարերի խորհից: Նույն դարեր շարունակ հեծել են բուրժուական բռնակալ լծի տակ, անձնուրաց պայքար մղել հանուն ազատության ու անկախության: Մեր ժողովուրդների բարեկամությունը ավելի ամրապնդվեց ու զարգացավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի շնորհիվ:

Կեցցե՛ սովետական ժողովուրդների եղբայրական, անխախտ բարեկամությունը: Կեցցե՛ մեր բոլոր հաղթանակների կազմակերպիչ լեհիկյան մեծագործ պարտիան:

Լատվիայի Գիտությունների ակադեմիայի բոլորակից-անդամ է. ՍՎԻՐՊՈՒԼ-ՍՈՒՆԻԼԸ իր ելույթում ասում է.

— Գիրք դա այն բանալին է, որը յուրաքանչյուր ժողովրդի, յուրաքանչյուր մարդու համար բացում է մարդկային կուլտուրայի հարուստ գանձարանի դռները: Փա՛ռք Մեսրոպ Մաշտոցին, որ այդ բանալին տվել է իր ժողովրդին:

Մենք՝ լատիշ գիտնականներս, մեր հայ եղբայրների հետ հպարտանում ենք, որ Մեսրոպ Մաշտոցը եղել է աշխատավոր ժողովրդի գավակ, որ նա դուրս գալով ժողովրդի ծոցից, իրագործել է հայ գրերի ստեղծման վիթխարի պատմական խնդիրը:

Հայաստանում ես եղել եմ Երեսունհինգ տարի առաջ: Եվ ահա, երբ նորից ոտք դրի այս հողի վրա՝ քվաց, քե ուրիշ տեղ եմ բնկել, փոխվել է հայոց երկիրը: Հայաստանը բոլիշ է ապրում, նրան քեներ են տվել Սովետական իշխանությունը, Մեծ Լենինի ամենահարգ զաղափարները: Հայաստանը, ինչպես ամառն Ռայնիսը կասեն, զնում է դեպի արևը, դեպի կոմունիզմի արևը: Խոսքը տրվում է Կիրգիզիայի Գիտությունների ակադեմիայի աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Ա. ԹՈՒՐՍՈՒՆՈՎԻՆ:

— Թույլ տվե՛ք Կիրգիզիայի գիտնականների, ինտելիգենցիայի, բոլոր աշխատավորների անունից, — ասում է նա, — ջերմորեն ողջունել տաղանդավոր ու աշխատասեր հայ ժողովրդին՝ հայկական գրի ու դպրության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված այս փառավոր տոնահանդեսի առթիվ:

Սովետական իշխանության տարիներին, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ուսումնական ժողովրդի և Սովետական Միության մյուս ժողովուրդների օգնությամբ Հայաստանը վերածվել է սոցիալիստական ծաղկած ուսպուրիկայի: Հայ ժողովրդի ծոցից դուրս են եկել համաշխարհային հռչակ ունեցող գիտնականներ, կուլտուրայի ու արվեստի գործիչներ:

Կենսագործելով ՄԻԿՊ XXII համագումարի նախագծումները, Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքում հայ ժողովուրդը

իր արժանի բաժինն է մուծում կոմունիզմի կառուցման գործում:

Թող է՛լ ավելի ծաղկի եղբայրական հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրան:

Այս Ելույթ է ունենում Տաթևիստանի Գիտությունների ակադեմիայի աշխատակից, բանասիրական գիտությունների թեկնածու Մ. ԲԱԿՈՆՎԻԸ:

— Մեսրոպ Մաշտոցը, — ասում է նա, — անգլահատուկի բաժին է մուծել հայ ժողովրդի կուլտուրայի զանազանում: Նրա հորինած գրերի շնորհիվ ծնունդ առավ հայ պատմագրությունը, որը տվեց այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Մովսես Խորենացին, Նզարիկ Կողբացին, Նիզիկեն, Կորյունը և ուրիշներ: Հայ ժողովուրդը աչքի լույսի պես պահեց մեսրոպյան տառերը, այդ տառերով ստեղծեց գիտական, պատմական ու գրական անգույնական գոհարներ:

Ելույթ է ունենում Թուրքմենիայի Գիտությունների ակադեմիայի քրդական-անգամ Ջ. ՄԱՌԻԽԱՄԵԴՈՎԱՆ:

— Այսօր, հայկական կուլտուրայի զարեան այս պայծառ տոնին, — ասում է նա, — ես բերել եմ ձեզ Թուրքմենիայի գիտնականների, քուրմեն ողջ ժողովրդի ջերմ ողջույնը:

Մեծ է հայ գրերի ստեղծման պատմական նշանակությունը հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման համար: Հայերեն տառերով գրված քուրմական շատ աղբյուրներ մեծագույն արժեք ունեն կուլտուրայի պատմության և, մասնավորապես, քուրմական լեզուների պատմության ուսումնասիրության համար:

Թանկագին բաբելամեն՝, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված այս հիանալի տոնը սովետական եղբայրական ժողովուրդների կուլտուրայի մեծ տոնահանգն է: Թույլ տվե՛ք ամբողջ սրտով ցանկալ ձեզ՝ Մեսրոպ Մաշտոցի եղբայրի հետնորդներիդ, նորանոր հաջորդություններ կոմունիզմի կառուցման մեծ գործում:

— Հայ և Լատին ժողովուրդներին սաբեր ու ծովեր են բաժանում իրարից, — իր Ելույթում ասում է էստոնիայի Գիտությունների ակադեմիայի քրդական-անգամ, էստոնիայի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի դիրեկտոր Վ. ՄԱԿԱՄԻՅԱՆ, — բայց մեզ միավորում են Սովետական իրականությունը, միասնական գաղափարներն ու ձգտումները, մտերմիզմ-լենինիզմի ուսմունքը: Ո՛չ սաբեր, ոչ հեռավորությունը չեն խոչընդոտում մեր համերաշխությանը: Հայաստանի ու էստոնիայի կապերը զարգանում են բուռն քափով: Այդ կապերի լավագույն միջոցներից է գրականությունը: Նույնպես զարգացած տարիներին Լատիններեն լեզվով լույս են տեսել հայ հեղինակների գրքերը՝ բառարաններ, տալաֆաներ: Այսպիսով, անցած տասնյոթ տարիներին, Լատինական

յուրաքանչյուր բնականից ընկնում է մեկ բարգավաճած հայկական գիր: էստոնիայում լավ գիտեն հաշատուր Արովյանին, որը սովորել է Տարտուի համալսարանում: Թարգմանված է մեսրոպյան «Վերս Հայաստանին», տալագրության է պատրաստվում Արովյանի «Տարտուի օրագիրը»:

Թող ծաղկի և է՛լ ավելի ամրապնդվի մեր ժողովուրդների բաբելամությունն ու համագործակցությունը՝ հանուն կոմունիզմի հաղթանակի, հանուն բոլոր ժողովուրդների եղբայրության ու բարգավաճման:

Հանդիսավոր նիստի մասնակիցները սրտագին ու ջերմորեն դիմավորեցին լիբանանահայ շնորհալի գրող ԱՐՄԵՆ ԳԱՐՅԱՆԻ: Իր Ելույթում նա ասում է.

— Իմ հարգատեն՝, որ հավաքվել եմ այսօր այս շնորհալի տոնում, իմ քանկագին հայեր՝ ու եղբայրներ՝, հարուստ, շատ հարուստ է մեր լեզուն, բայց ինչ խոսք, որ նման փառապանք մի տարեքվի առթիվ իր հայրենի երկիրը առաջին անգամ տեսնող հայերենաբարձ սիլյուեթահայ մարդու համար դժվար է սանձել այն խորունկ հուզումը, որ այնպիսի է իր սիրտը, և որոնել բառեր՝ արտահայտելու համար այն անսահման երախտագիտությունը հանդեպ մեր լեզվի, մեր զգրության հիմնադրի ու հիմնաքարի:

Հոնտորը իր երախտագիտությունն է հայտնում ռեսպուբլիկայի աշխատավորությանը, որի անձնուրաց ջանքերով ծաղկում ու բարգավաճում է ամբողջ սիլյուեթահայության հույսի ապավեն Սովետական Հայաստանը, նրա տրեւտությունը, գիտությունը, արվեստն ու կուլտուրան:

Ամբիոնի մոտ է ամերիկահայ բիոֆիզիկոս, պրոֆեսոր ՄԱՆԱՍՍ ՍԵՎԱԿԸ:

— Մենք, — ասում է նա, — տոնում ենք Մեսրոպ Մաշտոցի ծնունդը, բայց երբեք չենք նշի նրա մահը, որովհետև նրա գործն անմահ է: Նա անմահացել է իր ժողովրդին՝ շնորհիվ իր ստեղծած ալբյուրների:

Չենք կարող չնշել ռուս ժողովրդի եղբայրական օգնությունը մեր բազմաշաբառ ժողովրդին: Երբ մեր կեղծավոր Եվրոպացի բաբելամները զավաղեցին մեր դեմ, մեր հյուսիսի բաբելամները արյուն տվին իրենց արյունից, երբ արյունահամ էին, հաց տվին, երբ անոթի էին, հույս ու հավատ ներշնչեցին, երբ ընկել էին բուսաբեր:

Մեր երիտասարդ աստղագետներն այսօր աստղերի հետ խոսում են հայոց լեզվով: Թույլ տվե՛ք մաղբիկու, որ նրանք շուտով մեսրոպյան լեզուն հնչեցնեն տիեզերական տարածություններում:

Հայրենիքի նկատմամբ ամերիկահայերի տա-
ձած ջերմ զգացմունքներն արտահայտեց գրող
ՎԱՀԻ ՀԱՅԿԸ:

— Սիրելի և քանկազին բնկերեն՝ ու բարե-
կամեն՝,— ասում է նա,— բույլ տվե՛ք ողջու-
նել Մեսրոպ Մաշտոցի հիշատակին նվիրված
այս համազգային տոներ: Նա անշափ հուզված
էմ, սիրտս ուռչում է հպարտությունից: Ձեզ
հետ է ողջ ամերիկահայությունը, որին ջերմաց-
նում ու թևավորում է մայր Հայրենիքի ամեն
մի հաջողությունը:

Մեսրոպի ստեղծած այրուրներ լույս տվեց
զարեւ շարունակ և մնաց անմար: Այդ անշիշա-
նելի լուսնաբար հասավ մինչև 1920 թվականի
նոյեմբերի 29-ը, երբ հայերեն տառերով գրվեց՝
Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետություն:

Սփյուռքի ամբողջ հայությունը ձեզ հետ է,
քանկազին հայրենակիցներ:

Այնուհետև Սովետական Հայաստանի Դիտու-
թյունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Հով-
հաննիսյանը հրապարակում է հորելյանական
հանձնաժողովի անունով Միության տարբեր
հաղափներից, գիտական հաստատություններից
և գիտության ու գրականության ակադեմիայի գոր-
ծիչներից ստացված ողջույնի մի շարք նկո-
րեր:

Նախագահող ընկ. Քոչինյանը հանդիսավոր
նիստը հայտարարում է փակված:

* * *

Իրեկոյան, նույն դահլիճում հանդիսավոր
նիստի մասնակիցների համար տրվեց ճոխ ճա-
մերգ՝ ռեսպուբլիկայի կառավարողական լավա-
զույն ուժերի մասնակցությամբ: (ՀՀԳ)

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵԿՈ ՍՅՈՒՆԱԶԱՐԴ ԴԱՇԼԻՃՈՒՄ

Վաղուց ի վեր Մոսկվայում լավ տրադիցիա
է դարձել եղբայրական սոցիալիստական ռես-
պուբլիկաների ժողովուրդների կյանքի մեծ տա-
րեքվերը նշելը: Հայաստանի ամենափառավոր
լեզրից մեկը՝ ղարիբյան ստեղծումը, սովետա-
կան ամբողջ կուլտուրայի մեծ ու բերկրալի
տոնն է: Ուստի մայիսի 27-ին Միությունների
տան Սյունազարդ դահլիճում հայ այրուրների
հանձնարող ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդ-
յան 1600-ամյակի հանդիսավոր երեկոյի էին
հավաքվել մայրաքաղաքի աշխատավորներ, հա-
սարկայնության ներկայացուցիչներ, արվեստի
և կուլտուրայի գործիչներ: Մեծ լուսավորչի հի-
շատակին պատշաճը մատուցելու էին եկել մե-
րկրի եղբայրական շատ ռեսպուբլիկաների
գրողներ:

Այդ օրը տոնակաճոճն զարդարված էր Սյու-
նազարդ զափլիճը: Սաղիկներով զարդարված
բեմի ճակատին փակցված էր Մեսրոպ Մաշտոցի
դիմանկարը: Ժողովի նախագահության մեջ էին՝
գրողներ Մ. Շահինյանը, Ն. Զարյանը, Մ. Ար-
սենը, Ա. Գրաշին, Վ. Կոժենիկովը, Մ. Բաժանը,
Ա. Լուպանը, գիտնականներ, Դերագույն Սովետ-
ների ղեկավարներ:

Ժողովը բաց է անում ՍՍՌՄ Դերողների միու-
թյան վարչության քարտուղար Վ. Կոժենիկովը:
Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործունեու-
թյան մասին զեկուցմամբ հանդես եկավ Մա-
րիետա Շահինյանը: Մեր ժողովրդի մեծ զավա-
կի կյանքն ու գործունեությունը, ասաց նա,
Հայաստանի պատմության ամենահին և հիա-
նալի էջերից են: Դպրության ստեղծմամբ Մաշ-

տոցը միավորեց Հայրենիք: Դա ամբողջ հայ
պատմության համար մեծագույն նշանակություն
ունեցող գործ էր: Դիտնականը ոչ միայն ստեղ-
ծեց այն այրուրներ, որը մինչև օրս ծառայում
է հայ ժողովրդին: Նա բացեց ղարիցներ, որտեղ
պատրաստեց շատ գիտնականների, ժամանակին
եղած ամբողջ լավագույնի հայերեն քարգմա-
նությունների սկիզբը դրեց:

Մարիետա Շահինյանը վառ ու պատկերավոր
կերպով խոսեց գիտնականի հոգևոր կերպարի
մասին: Զեկուցողը վերստեղծեց կերպարը հիա-
նալի մարտիկ մարդու, որն անսահման սիրում
էր իր ժողովրդին, իրեն ամբողջովին նվիրեց
ժողովրդին, ծառայեց նրան իր կյանքով, իր
խոհերով ու գործերով:

Մեսրոպ Մաշտոցի սխրագործության ինտեր-
նացիոնալ նշանակությանը նվիրեցին իրենց
կույրները Ն. Զարյանը և Մ. Բաժանը: Լուսա-
վորչի մեծ գործերով, ասաց Ն. Զարյանը, Մես-
րոպ Մաշտոցը հաստատում էր այն զաղափա-
րը, որ ժողովուրդը ժողովրդին բարեկամ է ու
եղբայր: Ուստի հայ գիտնականի հորելյանը
դարձավ մեր երկրի բոլոր ազգությունների
կուլտուրայի իսկական տոն:

Մեսրոպ Մաշտոցը, ընդգծեց Ուկրաինայի
ներկայացուցիչ Մ. Բաժանը, իր այրուրներով
արտահայտեց ոչ միայն այն, ինչ որ հայն ուզում
էր աթել հային, այլև ուրիշ ժողովուրդներին:
ամբողջ աշխարհին:

Ուկրաինացի բանաստեղծը ընթերցեց կոմու-
նիզմին նվիրված ողբունչ բանաստեղծություն-
ներ:

Հայ կուլտուրայի հարստությանը, նրա ժողովրդական տրադիցիաներին նվիրեց իր կույքը Ս. Կապուտիկյանը, որն իր խոսքն ավարտեց Մեսրոպ Մաշտոցին ձոնած բանաստեղծությամբ: Մեսրոպ Մաշտոցի սխարագործության և փառավոր գործերի՝ մոլորական ժողովրդի կուլտուրայի համար ունեցած նշանակության մասին խոսեց Ա. Լուսյանը: Այդ բնույթից կույք ունեցավ Մ. Ռահիմը: Ռուս բանաստեղծուհի Վ.

Ջվադինցևան ընթերցեց Վաղարշակ Կորենցի Մեսրոպ Մաշտոցին նվիրված բանաստեղծության իր բարգձմանությունը:

Այդ երկուն, որտեղ հայերենին հաջորդում էր ռուսերենը, որտեղ լսվում էին մեր երկրի շատ ժողովուրդների ներկայացուցիչների ձայները, վերածվեց սովետական ուսպուրիկաների եղբայրական ամբողջ ընտանիքի սոցիալիստական կուլտուրայի մեծ ու բերկրալի տոնի:

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆԵՐ, ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԺՈՂՈՎՆԵՐ, ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԲԱՑՈՒՄ

Երկու օր տևեց ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵ-ՄԻԱՅԻ Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ հոբելյանական գիտական սեսիան՝ նվիրված հայ գրերի հանճարեղ ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին: Ինստիտուտի ղեկավար ընկ. Գ. Հովհաննիսյանը խոսքից հետո առաջինը գեկուցումով հանդես եկավ պրոֆեսոր Ե. Տեր-Մինասյանը, որը Մ. Մաշտոցին բնութագրեց իրեն հայ գրերի ստեղծող, իրեն իր ժամանակի առաջադրած մեծ պարզեմի հանճարեղ լուծող: Մեսրոպ Մաշտոցի կենսագրությանը նվիրված Կոբյունի «Վարժ Մաշտոցի» գիրքը իրեն հայ գրականության սկզբնավորման ազատի բնույթին էր նվիրված բանասիրական գիտությունների բնկնածու Մայիս Ավարյանիչյանի գեկուցումը: Ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Գր. Հակոբյանի գեկուցումը նվիրված էր Մաշտոցի շափածո ստեղծագործությունների վերլուծությանը:

Գիտական սեսիայում գեկուցումներ տրվեցին նաև «Մեսրոպ Մաշտոցը Եվրոպական և ռուսական հայագիտության զննամամբ», «Հանախապատում» ճառերի հեղինակի հարցը», «Մեսրոպ Մաշտոցի կերպարը ճալ գրականության մեջ» բնմաներով: Այդ գեկուցումները կարգացին բանասիրական գիտությունների ղոկտոր Սալամ Արեշյանը և բանասիրական գիտությունների բնկնածուներ Արմիկ Սրապյանն ու Ալիս Մանուկյանը:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ հոբելյանական գիտական սեսիան՝ նվիրված Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին տեղի ունեցավ ինստիտուտի նորակառույց շենքի մեծ դահլիճում: Այն իր ընդարձակ խոսքով բացեց ինստիտուտի ղեկավար, պատմական գիտությունների բնկնածու Վ. Համազասպյանը:

Սեսիայում առաջին օրը հանդես եկան գիտությունների բնկնածուներ, ղոցենտներ Մ. Հասարայանը և Ա. Արահամյանը: Նրանք իրենց գե-

կուցումներում բնութագրեցին Մաշտոցի դարաշրջանը և նրա ստեղծած այբուբենի հիմունքները:

Ապա գիտական սեսիայում գեկուցումներ լրսվեցին՝ «Հանախապատում ճառի» զաղափարական բովանդակությունը և նրանց հեղինակի հարցի շուրջը» (գեկուցող՝ ղոցենտ Ա. Մկրտչյան), «Մաշտոցի կերպարը գրականության մեջ» (գեկուցող՝ ղոցենտ Հ. Ռատունի) և «Մաշտոցը կերպարվեստում» (գեկուցող՝ ավագ դասալոս Վ. Խաչիկյան)՝ բնմաների շուրջը:

Մաշտոցին նվիրված գեկուցումներ են կարդացվել նաև ուսանողական գիտական սեսիայում:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ուսանողական գիտական սեսիայից հետո, որը տևեց մի քանի օր, տեղի ունեցավ նաև Համալսարանի դասախոսական կազմի գիտական հորիչանական սեսիան, ուր լսվեցին 10 գեկուցումներ: Այստեղ սեսիան սկսվեց ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ն. Հարությունյանի բացման խոսքով, որից հետո «Մեսրոպ Մաշտոց» բնմայով ընդարձակ գեկուցում կարդաց ղոցենտ Վ. Նալբանդյանը: Գոցենտ Հ. Ժամկոչյանը իր գեկուցման մեջ բնութագրեց Մեսրոպ Մաշտոցի դարաշրջանը, իսկ պրոֆեսոր ղոկտոր էդ. Աղայանն իր գեկուցումը նվիրեց Մեսրոպյան այբուբենին ու ուղղագրությանը: Հայ գրերի ստեղծողի աշխարհայացքի ու հայ գրերի ստեղծման բովանդակին էին նվիրված պրոֆեսորներ Հ. Գալիկյանի և Ա. Արահամյանի գեկուցումները:

Համալսարանի գիտական սեսիայում գեկուցումներով հանդես եկան նաև պրոֆեսոր Մ. Մկրտչյանը՝ «Հայ սլավոագրությունը 5-րդ դարում», պրոֆեսոր Գ. Սևակը՝ «Մեսրոպյան գրերը, նրանց սոցիությունները և կառուցվածքի սկզբունքները», մանկավարժական գիտությունների ղոկտոր Ա. Մովսիսյանը՝ «Մեսրոպ Մաշտոցը հայագիր դպրոցի հիմնադիր», ֆիզի-

կա-մաքևատիկական գիտությունների զոկտոր Կ. Պետրոսյանը՝ «Մեսրոպ Մաշտոցի և բվարկութան հայկական սխտմք», ինչպես նաև Լմ. Պիվադյանը՝ «Նախամեսրոպյան գրի և գրականության հուրքի շուրքը» քեմաներով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱԿԸՆԹԵՐ ՀԻՆ ՉԵԹԱԳԵՐԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԻՆ ԳԻՏԱԼԻՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ— «ՄԱՏԵՆԱԿԱՆ ԳԱՐԱՆԸ», որին կառավարական որոշմամբ շնորհված է Մեսրոպ Մաշտոցի անունը, հայ գրերի ստեղծողի ծննդյան 1600-ամյակին նվիրված իր գիտական սեսիան հրավիրել էր նորակառույց հայկապ շնեմում: Սեսիան, որ բացվեց ինստիտուտի գիտկտոր, պատմական գիտությունների զոկտոր Լ. Խաչիկյանի խոսքով, տեղեկությամբ Մեսիայում գեկուցումներ լսվեցին 12 քեմաների շուրքը: Պրոֆեսոր Կ. Մելիք-Օհանջանյանի գեկուցումը նվիրված էր «Մաշտոցի վարքի» ժանրային առանձնահատկություններին, քանասիրական գիտությունների քեկնածու Ա. Մարտիրոսյանի գեկուցումը՝ Մաշտոցի գործունեության բնույթին, իսկ փիլիսոփայական գիտությունների քեկնածու Ս. Արեշտայանի գեկուցումը՝ գրերի գյուտին և հայկական հին քարգմանություններին:

Գիտական սեսիայի երկրորդ օրը «Վարդան Արեւելցու գրերի գյուտին նվիրված ներողք» գեկուցումով հանդես եկավ Փ. Արքայանը, «Մեսրոպատառ աշայեզու գրականության մասին» գեկուցումով՝ պատմական գիտությունների քեկնածու Հ. Փափազյանը, «Հայատառ լեհերեն վավերագրեր» քեմայով՝ Վ. Գրիգորյանը և Ս. Պիտովիչը, «Հայ գրականության սկզբնավորման շրջանի հայերեն» գեկուցումով՝ բանասիրական գիտությունների քեկնածու Լ. Խաչերյանը, և «Մեսրոպ Մաշտոցը և գրերի գյուտը օտարագրի հայագետների ուսումնասիրմամբ» քեմայով՝ Ա. Քյոշկերյանը: Ապա գեկուցումներ լսվեցին «Թե ինչու Մաշտոցը քարգմանեց Սողոմոնի առակները» (գեկուցող՝ բանասիրական գիտությունների քեկնածու Ա. Ղանալանյան), «Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը» (գեկուցող՝ պատմական գիտությունների զոկտոր Լ. Խաչիկյան), «Մաշտոցի բնաբերգություններ» (գեկուցող՝ բանասիրական գիտությունների քեկնածու Ա. Մեացականյան) և «Մաշտոցը և հայ հոգևոր երգարվեստը» (գեկուցող՝ Ն. Թամբիլյան) քեմաների շուրքը:

Բացելով ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻՅԱՆ ԿԱՆՈՒՆՈՒՄԻՆ հանդիսավոր ժողովը նվիրված մեծ գյուտարար, հանհարեղ գիտնական Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին, ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանն ասաց.

— Մեր ժողովուրդը տոնում է հայ մեծագույն մաածողի, իր հանհարեղ գաղտկի, հայ գրության հիմնողի՝ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Մեր մշակույթի պատմությունը տվել է բազմաթիվ կարկառուն դեմեր, սակայն բոլոր այդ գործիչներից հայ ժողովուրդը ամենից շատ պարտական է Տարոնի գաղտուկ Հուցեկաց գյուղի գեղջուկ Վարդանի որդի Մաշտոցին: Այն աշխատանքը, այն շարշարանները, որ, ինչպես ասում է ավանդությունը, կրել է նա իր մեծ գյուտի համար՝ հիւրավի տիտանական են: Նրա գյուտը հսկայական դեր խաղաց մեր ժողովրդի միտնությունը, ազգային ինքնությունը պահպանման համար:

— Այս տարի, — շարունակեց ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, — լրանում է նաև հայերեն առաջին գրի տպագրության 450-ամյակը: Մենք շատ և շատ երջանիկ ենք, որ հայ ժողովուրդը մեծ շուրքով տոնում է Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: Այդ տոնը նշում են Սովետական Միության բոլոր ժողովուրդները, ամբողջ սովետական երկիրը:

Ակադեմիայի հանդիսավոր ժողովում առաջինը գեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Ա. Ղարիբյանը, նրա գեկուցումը նվիրված էր «Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց գրի և գրության ստեղծող» քեմային: Ապա արժեքավոր գեկուցումներով հանդես եկան ՀՍՄԻ Գիտությունների ակադեմիայի քրքրակից-անդամ Ա. Երեմյանը բանասիրական գիտությունների զոկտոր Ս. Տեր-Մինասյանը, ՀՍՄԻ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, զոկտոր Կ. Ղաֆաղարյանը, բանասիրական գիտությունների քեկնածու Ա. Ղանալանյանը: Նրանց գեկուցումները նվիրված էին «Մեսրոպ Մաշտոցը և նրա ժամանակը», «Հայ գրերի գյուտի քվականի և այլ հուրակից խնդիրների մասին», «Մաշտոցյան գրերի պատմական նշանակությունը», «Հայկական գրերի հնագույն տեսակները», «Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդական բանահյուսության մեջ» քեմաներին:

Մեսրոպյան օրերը նշանավորվեցին նաև երկու նշանավոր իրադարձություններով: Մայիսի 26-ին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ—Մատենադարանի հրապարակում տեղի ունեցավ ՄԵՄՐԱՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ, որին ներկա էին պարտիական ու պետական ղեկավար աշխատողներ, գիտության, կուլտուրայի ու արվեստի գործիչներ, բազմաթիվ հյուրեր եղբայրական ուսույթիկաներից ու արտասահմանյան երկրներից:

Արձանի բացման անոթիվ խոսք ասացին երեկվանի Քաղսիսային Սովետի Գործադիր Կոմիտեի նախագահ Բեն. Ս. Վարդանյանը, գրող Ստ. Զորյանը, Կիրովի անվան գործարանի ապարատավարներ Րբիզադավար, ՍՍՌՄ Կերագույն Սովետի ղեկավար Ս. Պետրոսյանը, Պոռչյանի անվան դպրոցի ղեկավար, ուսուցիչիկայի վաստակավոր ուսուցիչ Բենկ. Կ. Թովմասյանը, Լիրանահայ տաղանդավոր բանաստեղծ Ն մանկավարժ Վահե Վահյանը, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ղեկավար Լ. Խաչիկյանը, Նալբանդյանի անվան դպրոցի աշակերտուհի Անանիտ Պարսամյանը:

Արձանի հետնամասի ձախ կողմում փորագրված են հայերեն առաջին գրավոր նախադասության բառերը. «ՀԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏԻՆ ԵՒ ԶԽՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶՐԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ»: Արձանի բարձրությունը պատվանդանի հետ միասին 6,6 մետր է: Նրա հեղինակն է Բանդակագործ Վուկաս Զուրաբյանը:

Մյուս կարևոր իրադարձությունը Մ. Մաշտոցին նվիրված ՀԱՅ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄՆ էՐ Օչակունում, այնտեղ, ուր գրողը լուրջ Մաշտոցի գերեզմանը: Այստեղ ևս փառահեղ հուշարձանի բացմանը ներկա չին պարտիական ու պետական ղեկավար աշխատողներ, գիտության, կուլտուրայի ու արվեստի գործիչներ, մեծ քվով հյուրեր:

Միտինգը բացեց Աշտարակի շրջանային Ուովետի Գործադիր Կոմիտեի նախագահ Մ. Մովսիսյանը: Ապա հանդես եկան ՀՍՍՌ Լուսավորության մինիստր Շ. Սիմոնյանը, Օչականի Մաշտոցի անվան դպրոցի ուսուցչուհի Վ. Կյուլմանյանը, օչականցի կոլտնտեսական Ս. Խականյանը, Լիրանահայ մանկավարժ ու հասարակական գործիչ Արմեն Ղարիբը, Սիյունահայ գրող Կոստան Զորյանը, Վենետիկի Մխիթարյան Լիարանության ներկայացուցիչ Հայր Եղիա Կիլիկյանը, գրող Հմայակ Սիրասը:

Իրանիտե սաար մետաղեղ երկու այուն ներկայացնող այս հուշարձանը հիշեցնում է բացված գիրք, որի մի էջին մետաղյան խորաքանդակ տառերն են փորագրված, իսկ մյուսին՝ հետևյալ մակագրությունը՝ «ԵՒ ԱՅՐ ՄԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ, ՊԱՏՄԱԿԱՆ ԴՅՐԱԽՏ ՄԻ ՊԱՀԻ ԻՐ ՀԱՅՐԱԿԱՆ ԱԶՈՎ ՆՐԵՑ ՄԵՐ ՆՈՐՈՒ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԻ ԱՅՐՈՒՐԵՆԸ, ՈՐ ԻՐԱՎԱՄՐ ԿՈԶՆՈՒՄ Է ՄԵՍՐՈՊՅԱՆ: ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՎԱԿԸՆ ԱՆ ԴԱՐԻՐ ՇԱՐՈՒՆԱԿ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՑ, ՄԻՆԶԵՎ ՈՐ ՆՈՐՈՒ ԵՎ ՍՔԱՆԶԵԼԻ ԱՅԼ ՕՐԻՐ ԵԿԱՆ, ԵՐՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ Է ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՒՄ ԻՐ ՄԵՄԱԿՈՒՅՆ ԶԱՎԱԿԻՆ ԵՐԱԽՏԱԿԵՏՈՒԹՅԱՄՐ ԵՎ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՄՐ»:

Հուշարձանի հեղինակն է Երիտասարդ Բանդակագործ Ջ. Թորոսյանը: